ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/245

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.05.2022թ. թիվ 26/26-1/9126-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.05.2022թ. թիվ 8 գրության հիման վրա, 19.05.2022թ. թիվ 26/26-1/9126-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/245 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2022թ. թիվ 8 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը որոշում է ընդունել միակողմանի և ամբողջությամբ լուծել «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 13 դեկտեմբերի 2021թ. կնքված N ՀՀ ԱՄԷՀ ՈՄՊ ԳՀԱՊՁԲ 22/16/1-1 ծածկագրով պայմանագիրը՝ դրա էական խախտման հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով՝ միջնորդում ենք «Ղահրաման» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/245 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/245 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/245 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.10.2022թ. կնքվել է «ՀՀ ԱՄԷՀ ՈՄՊ ԳՀԱՊՁԲ 22/16/1-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պատվիրատուի կողմից տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ տեղեկագիր), հրապարակված չէ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

3. «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 12.05.2022թ. թիվ 8 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9126-2022 գրությունը, «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 12.05.2022թ. թիվ 8 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 27.10.2022թ. կնքվել է «ՀՀ ԱՄԷՀ ՈՄՊ ԳՀԱՊՁԲ 22/16/1-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված չէ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Էջմիածնի համայնքապետարանի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 12.05.2022թ. թիվ 8 գրությամբ:

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***<u>Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:</u>*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումներից ելնելով, արձանագրում եմ, որ Պայմանագիրը կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված չէ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում, որպիսի պայմաններում Պայմանագիրը կնքած անձը չի համարվել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, փաստացի Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ 8 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 12.05.2022թ., վերջինս էլ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած չլինելու պայմաններում:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետը հոսելու սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի

իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.05.2022թ. թիվ 26/26-1/9126-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**